ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 մարտի 2017 թվականի N 39-Ա

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետի և հիմք ընդունելով *Մ. Պետրոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.՝**

1. *Մարինե Ակերսանի Պետրոսյանին* 2017 թվականի մարտի 6-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2014 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված N 25 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից գրաղեցնելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ՝ *Հասմիկ Յաշֆիդանի Գոգոյանի* վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի մարտի 06
ք. Հրազդան